# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ ՄԱՍԻՆ

Հետբուհական ուսումնակրթական ծրագրերի փորձագետ,
ավագ կլինիկական մասնագետ
դոց. Լ.Թ. Նիկոլայան

# Վարակը տարածվում է հետևյալ ուղիներով



- ТԲ-ի փոխանցման հիմնական ճանապարհը օդակաթիլայինն է

- Վարակի հիմնական աղբյուրը՝ թոքերի ТԲ-ով հիվանդը, ով հազալիս, ծիծաղելիս կամ փռշտալիս արտազատում է ՏՄԲ պարունակող խորխի մանրիկ մասնիկներ:

- **1 տարում** ТԲ-ով հիվանդը կարող է վարակել 15-20 մարդու.



- Վարակը կարող է փոխանցվել է նաև M.bovis-ով վարակված կաթի միջոցով:



- 1-5 մկմ տրամագծով մասնիկները կաթիլային կախույթ են կազմում, որը, շրջակա պայմաններից կախված, կարող է մի քանի ժամ պահպանվել օդում:

# Վարակմանը նպաստում են



- մարդկանց սերտ շփումը

- Շփման տևողը






- Մանրէազատման զանգվածի չափը

# Վարակման հետևանքները

1. մեծամասամբ (80-90%) վարակը հիվանդության չի վերածվում, այլ ձևավորվում է գաղտնի ՏԲ, ինչի վկայությունը դրական տուբերկուլինային փորձն է (Մանթու)
2. վարակից հետո անմիջապես հիվանդություն է զարգանում
3. վարակից հետո հիվանդություն է զարգանում ոչ թե անմիջապես, այլ 10-նյակ տարիներ անց

# Խոցելի են







1. Ոգելից խմիչքը չարաշահողներ
2. դատապարտյալներ
3. թմրամոլներ
4. գործազուրկներ
5. անօթևաններ
6. փախստականներ







# ՏԲ- ի ախտանիշերը

- երկարատև (3շաբաթ և ավելի տևողությամբ) խորխարտադրությամբ ընթացող հազ,
- հևոց,
- ցավ կրծքավանդակում
- արյունախխում
- ինքնաթունավորման համախտանիշ (37-37.5°C ջերմություն՝ 3 շաբաթ և ավելի տևողությամբ, թուլություն, դյուրհոգնածություն, գիշերային քրտնարտադրություն, ախորժակի կորուստ, մարմնի զանգվածի նվազում)




Հոդացավեր, քայլվածքի փոփոխություն



գոտկացավեր,միզարձակման խանգարում,մեզում փոփոխություն ներ




Սեռական օրգանների ՏԲ՝ չբերություն



Տեսողության նվազում




Ավշահանգույցների մեծացում

Նման գանգատներով անձինք պետք է դիմեն բժշկի, ով ՏԲ կկասկածի

# ՏՓ-ի ԲՈՒԺՄԱՆ ՄԱՍԻՆ ՍԽԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ

- Բուժվում է ժողովրդական միջոցներով — X
- Ինքնուրույն կանցնի — 50x50
- Կարելի է ընդհատել, հետո շարունակել — X
- Կարելի է ընդհատել լավանալուց կամ բացիլազատումը դադարելուց հետո — X
- Ծանր են կողմնակի երևույթները դեղորայքից «կործանվում են այլ օրգանները» — 50x50
- 1-ին շարքի դեղորայքը թույլ է և ավելի թունավոր — X